Այսպիսով, դատարանն ապացուցված համարեց, որ ամբաստանյալներ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանը և Խաչատուրի Ռուբենի Շաբոյանը կատարել են հանցավոր արարքներ, որոնք

համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ 1-ին մասով, որոնցով և պետք է քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկվեն:

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այն հանգամանքները, որ բնութագրվում է դրական, խնամքին ունի չորս անձ, այդ թվում մինչև տասնչորս տարեկան երկու երեխա:

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այն հանգամանքները, որ բնութագրվում է դրական, խնամքին ունի հինգ անձ, այդ թվում մինչև տասնչորս տարեկան երկու երեխա, որոնցից Դավիթ Խաչատուրի Շաբոյանը տառապում է պերիտոնիտի հիվանդությամբ, երկրորդ կարգի հաշմանդամ է, կլին չի աշխատում, մայրը և հայրը երկրորդ կարգի հաշմանդամ են:

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:

Դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ձևանշված փաստաթղթերը պետք է պահել քրեական գործի հետ: Անդրադառնալով քաղաքացիական հայցին դատարանը գտնում է, որ այն պետք է բավարարել մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Դատաբանությամբ հաստատվեց, որ «Արդշինիմվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ Ընկերություն) պատճառված վնասի չվերականգնված գումարի չափը կազմում է 50.593.545 (հիսուն միլիոն հինգ հարյուր ինսուներեք հազար հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, որից 16.913.353 (տասնվեց միլիոն ինը հարյուր տասներեք հազար երեք հարյուր հիսուներեք) ՀՀ դրամի վնասը պատճառվել է Արմեն Բաղդասարյանի, Հովհաննես Համբարձումյանի և Խաչատուր Շաբոյանի հանցավոր գործողությունների հետևանքով, իսկ 33.680.192 (երեսուներեք միլիոն վեց հարյուր ութսունսուսուց հազար մեկ հարյուր ինսուներկու) ՀՀ դրամի վնասը Արմեն Բաղդասարյանի, Հովհաննես Համբարձումյանի և «Վասարաթ» ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հանցավոր գործողությունների հետևանքով:

Նկատի ունենալով վերը նշված փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ Հովհաննես Համբարձումյանը և «Վասարաթ» ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանը գտնվում են հետախուզման մեջ, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձվի 16.864.515 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսուներորս հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ, որից 8.950.579 (ութե միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 7.913.936 (յոթ միլիոն ինը հարյուր տասներեք հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար: Դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձվի 5.637.784 (հինգ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր

ութանասունչորս) ՀՀ դրամ, որից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 2.671.504 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր չորս) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:

Հետևաբար, դատարանը գտնում է, որ գումարի բռնագանձման մնացած մասով հայցապահանջը պետք է թողնել առանց քննության մինչև Հովհաննես Համբարձումյանի և «Վասարաթ» ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հայտնաբերելն ու նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը, ինչպես նաև առանց քննության պետք է թողնել Ընկերության հայապահանջի 2-րդ ու 3-րդ կետերը:

Հաշվի առնելով Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի ուղղումն ու սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև նոր հանցագործությունների կատարման կանխումը վերջիններիս կողմից հնարավոր է միայն նրանց որոշակի ժամկետով ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով, հասարակությունից մեկուսացնելու ազատազրկման դատապարտելու միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:

Հետևաբար, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանից, որպես գույքի բռնագրավում հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագրավվի 8.950.579 (ութե միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի գույքի, իսկ Խաչատուր Շաբոյանից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամի գույք:

Միաժամանակ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը, պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հեղվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 8.950.579 (ութե միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով

	<p>վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամի բռնագրավմամբ:</p> <p>Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել ամփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:</p> <p>Պատժի կրման սկիզբը հաշվել 2010 թվականի մարտի 21-ից:</p> <p>Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:</p> <p>2. Խաչատուր Ռուբենի Շաբոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:</p> <p>Խաչատուր Ռուբենի Շաբոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:</p> <p>ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամի բռնագրավմամբ:</p> <p>ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամի բռնագրավմամբ:</p> <p>Խաչատուր Ռուբենի Շաբոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել ամփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:</p> <p>Պատժի կրման սկիզբը հաշվել 2010 թվականի հունիսի 27-ից:</p> <p>Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:</p> <p>Արմեն Ռոբերտի Բաղդասարյանից հօգուտ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 16.864.515 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ, որից 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 7.913.936 (յոթ միլիոն ինը հարյուր տասներեք հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար: Խաչատուր Ռուբենի Շաբոյանից հօգուտ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 5.637.784 (հինգ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ, որից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 2.671.504 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր չորս) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:</p> <p>Քաղաքացիական հայցը մնացած մասով թողնել առանց քննության: Իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պահել քրեական գործի հետ:</p> <p>Ղատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ մեկամսյա ժամկետում:</p>
	ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ղատական ակտի ամսաթիվը:	04-02-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	14-03-2011

Էջերի քանակ:	1821
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	14-03-2011
Էջերի քանակը:	1829
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	15-03-2011
Ամսաթիվ:	07-09-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	08-09-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	12-09-2011
Էջերի քանակ:	249, 251, 310, 490, 123, 178, 324, 190
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	12-09-2011
Էջերի քանակը:	249,251,310,490,123,178,324,190
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ԳԴ/0023/01/10	
Ամսաթիվ:	04-03-2011
Ամբաստանյալ	
Անձ	
Անուն	Խաչատուր
Ազգանուն	Շաբոյան
Հասցե	չկա
Հոդված_1	

Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Պատվածություն:			
Պաշտպան			
Անուն	Ստեփան		
Ազգանուն	Կարապետյան		
Հասցե	Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար		
Պատիժ:			
Հոդված_2			
Հոդված	չկա		
Անբաստանյալ Անձ			
Անուն	Արմեն		
Ազգանուն	Բաղդասարյան		
Հասցե	չկա		
Հոդված_1			
Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Պատվածություն:			
Պաշտպան			
Անուն	Լևոն		
Ազգանուն	Պողոսյան		
Հասցե	Կոտայքի մարզ, գյուղ Կաթնաղբյուր		
Պատիժ:			
Հոդված_2			
Հոդված	չկա		
Խախտման միջոց:	Կալանավորում		
Ուն կողմից է բերվել բողոքը:	Պաշտպան		
Բողոքը բերող անձը			
Անուն	Ստեփան		
Ազգանուն	Կարապետյան		
Հասցե	Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար		
Բողոքի բովանդակությունը:	<p>Խաչատուր Շաբոյան մյուսը՝ Արմեն Բաղդասարյան Արմեն Ռոբերտի Բաղդասարյան Բեկանել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Խաչատուր Ռոբերտի Շաբոյանի /<< քր. օր-ի 179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , << քր. օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , << քր.օր. 66 հոդ. կարգով վերջնական պատիժ - ազատազրկում 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 << դրամի բռնագրավմամբ / վերաբերյալ 04.02.2011թ. դատավճիռը , Խաչատուր Շաբոյանին ճանաչել անպարտ << քր. օր-ի 179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , << քր. օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , նրան մեղսագրված արարքին տալ ճիշտ քրեաիրավական որակում , այն է՝ << քր. օր-ի 179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետի և << քր. օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետից վերաորակել << քր. օր-ի 38-178 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով և այդ հոդվածի սանկցիայով սահմանել պատիժ :</p> <p>Արմեն Բաղդասարյան մյուսը՝ Խաչատուր Շաբոյան Խաչատուր Ռոբերտի Շաբոյան Բեկանել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի /<< քր. օր-ի 179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , << քր. օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , << քր.օր. 66 հոդ. կարգով վերջնական պատիժ - ազատազրկում 9 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 8.950.579 << դրամի բռնագրավմամբ /</p>		

	վերաբերյալ 04.02.2011թ. դատավճիռը , Արմեն Բաղդասարյանի ՀՀ քր. օր-ի 179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , ՀՀ քր. օր-ի 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով արարքը վերաորակել ՀՀ քր.օր-ի 214 հոդ. 2-րդ մասով ` կիրառելով ՀՀ ԱԺ <<Համաներում հայտարարելու մասին>> 19.06.2009թ. որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժի կրումից , ինչօպես նաև հիմք ընդունելով մեղանացնող մյուս հանգամանքները` նվազեցնել նրա նկատմամբ սահմանված պատժաչափը` կիրառելով ՀՀ քր.օր-ի 64 կամ 70 հոդվածները :
Բողոքի ստացման կարգը:	Հանձնվել է փոստին
Ամսաթիվ:	02-03-2011
Չափահաս:	Այո
Ամսաթիվ:	09-03-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Արշակ Նշանի Խաչատրյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	14-03-2011
Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:	չկա
Ամսաթիվ:	15-03-2011
Երբ:	30-03-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	15-03-2011
Ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Երբ:	18-04-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	13:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Երբ:	18-04-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	0
Այլ նշումներ:	Դատական նիստը հետաձգվել է անորոշ ժամանակով,որի մասին հայտնվել է կեղմերին: Նոր նշանակման մասին կհայտնվի լրացուցիչ
Նիստերի դահլիճի համարը:	3

Ամսաթիվ:	26-04-2011
Փոփոխության հիմքը:	Հիվանդություն
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Եվա Նորայրի Դարբինյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ: 30-04-2011	
Երբ:	12-05-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	30-04-2011
Ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	23-05-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	06-06-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	20-06-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	14:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	24-06-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	16:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	2
Երբ:	27-06-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	

Ժամ:	11:45		
Այլ նշումներ:			
Նիստերի դահլիճի համարը:	2		
Անվտուցման թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է		
Ամսաթիվ:	27-06-2011		
Ամբաստանյալ			
Անուն	Արմեն		
Ազգանուն	Բաղդասարյան		
Հասցե	ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ		
Ամբաստանյալ			
Անուն	Խաչատուր		
Ազգանուն	Շաբոյան		
Հասցե	ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ		
Քր. դատ. օր. հոդված			
Հոդված	393-394		
Քր. դատ. օր. հոդված			
Հոդված	393-394		
Այլ նշումներ:			
Քր.օր. հոդված			
Հոդված	179, 190	Մաս 3,3	Կետ 1,1
Դատական ակտ:			
ԳՈՐԾ N- ԳԴ/0023/01/10			
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ			
< 27> հունիսի 2011թ. ք.Երևան			
ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ հետևյալ կազմով՝			
ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս.ԶԻՉՈՅԱՆ ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Տ.Հակոբյանի			
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ՄԵՂԱԴՐՈՂ՝ Ա.Ամիրզադյանի ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝ Ս.Կարապետյանի, Լ.Պողոսյանի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Տ.Խաչատրյանի			
Դռնբաց դատական նիստում, պաշտպաններ Լևոն Պողոսյանի, Ստեփան Կարապետյանի, ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի վերաքննիչ բողոքների հիման վրա, վճռաբեկ վարույթի կանոններով քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի ԱՐՄԵՆ			

ՌՈՐԵՐՏԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ և ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՒԲԵՆԻ ՇԱԲՈՅԱՆԻ`
ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,
190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

Պ Ա Ր Ձ Ե Ց

ԳՐՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ.

2010 փետրվարի 26-ին ՀՀ Գլխավոր դատախազության` ՀՀ Ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչության ավագ դատախազ Ա.Ամիրզադյանի կողմից առանձնապես խոշոր չափերի գումարի հափշտակության ապա այն օրինականացնելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 61202010 քրեական գործը` ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2010թ. մարտի 23-ին Արմեն Ռոբերտի Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2010թ. օգոստոսի 03-ին Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով:

2010թ. ապրիլի 20-ին Խաչատուր Ռուբենի Շաբոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ` ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում:

2010թ. հուլիսի 27-ին Խաչատուր Ռուբենի Շաբոյանը ձերբակալվել է:

2010թ. օգոստոսի 03-ին Խաչատուր Ռուբենի Շաբոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010թ. դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի

2010թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի` ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հովհաննես Գագիկի Համբարձումյանի` ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Խաչատուր Ռուբենի Շաբոյանի` ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քրեական գործից անջատվել է Հովհաննես Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ գործի մասը և քրեական գործին տրվել նոր համար` ԳԴ/0040/01/10: Կասեցվել է թիվ ԳԴ/0040/01/10 քրեական գործի վարույթը մինչև այն կասեցնելու հիմք ծառայած հանգամանքները վերացվելը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. փետրվարի 04-ի դատավճով Արմեն Ռոբերտի Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն` նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով` հանցավոր ճանապարհով ստացված գույքի 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի նկատմամբ ընտրված

խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2010թ. մարտի 21-ից:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է ամփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2010թ. հունիսի 27-ից:

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանից հոգուտ <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության բռնագանձվել է 16.864.515 (տասներեք միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ, որից 8.950.579 (ութե միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 7.913.936 (յոթ միլիոն ինը հարյուր տասներեք հազար ինը հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանից հոգուտ <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության բռնագանձվել է 5.637.784 (հինգ միլիոն վեց հարյուր երեսուցյոթ հազար յոթ հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ, որից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 2.671.504 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր չորս) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:

Քաղաքացիական հայցը մնացած մասով թողնվել է առանց քննության:

Ղատավճռի դեմ պաշտպաններ Լևոն Պողոսյանի, Ստեփան Կարապետյանի, ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի վերաքննիչ բողոքները Վերաքննիչ դատարանի 30.04.2011թ. որոշմամբ ընդունվել է վարույթ և գործը նշանակվել է քննության վճռաբեկության կարգով:

ԳՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա 2006–2008թթ հանդիսանալով <Արդշինինվեստբանկ> ՓԲԸ <Վարդենիս> մասնաձյուղի կառավարիչը, 2006-2008 թվականների ընթացքում, նախնական համաձայնության է եկել <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղի վարկային բաժնի մասնագետ Հովհաննես Համբարձումյանի, <Խաչատուր Շաբոյան> Ա/Ձ հիմնադիր-տնօրեն Խաչատուր Շաբոյանի և <Վասարաթ> ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ կեղծ վարկերի ձևակերպմամբ տրամադրված առանձնապես խոշոր չափերի գումարները կանխիկացման եղանակով յուրացնելու և դրանք օրինականացնելու վերաբերյալ:

Նախնական համաձայնությունը ձեռք բերելուց հետո Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006 թվականի հուլիսի 21-ից մինչև 2007 թվականի նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում, առանց մասնաձյուղի վարկառուների գիտության, նրանց անվամբ ձևակերպել են կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկ հատկացնելու թվով 198 կեղծ պայմանագրեր 53.661.800 դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումարի, ապա, հանցավոր ճանապարհով ստացված գումարների իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, պայմանավորվածության համաձայն նույն ժամանակահատվածում,

պարբերաբար փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող, միևնույն մասնաձյուղի հաճախորդ հանդիսացող <Խ.Շաբոյան> Ս/Չ-ի և <Վասարաթ> ՍՊԸ-ի հաշվեհամարներին: Գումարները փոխանցելուց հետո Խաչատուր Շաբոյանը և Հովիկ Խաչատրյանը իրենց հաշվեհամարներից ստացել են Արմեն Բաղդասարյանի և Հովհաննես Համբարձումյանի կողմից իրենց հաշվեհամարներին փոխանցված վերը նշված գումարները ապօրինի կանխիկացրել են իբր իրենց խանութներից ապառիկ կարգով վաճառել են կենցաղային տեխնիկա, որից հետո առձեռն ամբողջ գումարները փոխանցել են Ա. Բաղդասարյանին և Հ. Համբարձումյանին:

Յուրացման եղանակով հափշտակված գումարներից մի մասով կատարել են վարկերի մարումներ իրենց կողմից կատարված հանցանքը չբացահայտելու համար, իսկ մնացած մասը տնօրինել և ծախսել են անձնական կարիքների համար: ՀՀ Կենտրոնական բանկի մասնագետների կողմից <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղում իրականացված 2006-2008 թվականների ատուգման արդուներով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն՝ նշված կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010 թվականի մարտի 29-ի դրությամբ կազմել է 53.661.800 դրամից՝ 25.146.438 դրամ պարտք, տույժ տուգանքները 22.991.977 դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից՝ 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տույժ տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար, այսինքն հանցագործությունում:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա հանդիսանալով <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հիմնադիր-տնօրենը և զբաղվելով կենցաղային տեխնիկայի վաճառքով, <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղի նախկին կառավարիչ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի և վարկային բաժնի նախկին մասնագետ Հովհաննես Գագիկի Համբարձումյանի հետ նախապես պայմանավորվածություն է ձեռք բերել կեղծ վարկերի ձևակերպմամբ, հատկացված առանձնապես խոշոր չափերի գումարները յուրացման եղանակով հափշտակելու և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու հարցում: Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2007 թվականի նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում, առանց մասնաձյուղի վարկառուների գիտության, անձամբ օգտագործելու նպատակով, կեղծել են իրավունք վերապահող պաշտոնական վարկային փաստաթղթեր, դրանց հիման վրա ձևակերպել են 15.366.600 դրամ և 2.336 ԱՄՆ դոլար գումարի կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկեր հատկացնելու թվով 59 կեղծ պայմանագրեր, ապա, հանցավոր ճանապարհով ստացված այդ գումարների իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, գումարները պարբերաբար, մաս-մաս, փոխանցել լեն <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հաշվեհամարին կենցաղային տեխնիկա իբր գնելու պատակով, որից հետո, <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հաշվեհամարից գումարները (կանխիկ ստացել և առձեռն փոխանցել է Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ ՀԻՄՔԵՐԸ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԵՎ ՊԱՀԱՆՋԸ.

Ղատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել պաշտպաններ Ստեփան Կարապետյանը, Լևոն Պողոսյանը և ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանը :

Ամբաստանյալ Խ.Շաբոյանի շահերի պաշտպան Ս.Կարապետյանն իր վերաքննիչ բողոքով հայտնել է, որ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռն անհիմն է՝ պատճառաբանելով, որ նախաքննության մարմնի կողմից առաջադրված մեղադրանքը դատաքննությամբ չի հիմնավորվել:

Խ.Շաբոյանի կողմից կատարած գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներին և վերջինիս արարքը պետք է որակվի նույն օրենսգրքի 38-178 հոդվածի 3-րդ մասով, կամ ամբաստանյալը պետք է ճանաչվի անպարտ և արդարացվի:

Ըստ պաշտպան Ս.Կարապետյանի՝ ամբողջությամբ բացակայում է իր պաշտպանյալի կատարած արարքում յուրացման և փողերի լվացման հանցակազմի հատկանիշները: Ղատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ դատավճիռ կայացնելու վրա: Բացի այդ, քրեական արարքի սխալ գնահատման արդյունքում

Խ.Շաբոյանի նկատմամբ չափից ավելի խիստ պատիժ է նշանակվել: Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, <Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին> Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376, 397-րդ հոդվածների, 395-րդ, 397-399-րդ հոդվածների պահանջներով՝ պաշտպանը խնդրել է վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, բեկանել ընդհանուր իրավասության դատարանի 04.02.2011թ. դատավճիռը, Խաչատուր Շաբոյանին ճանաչել անպարտ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով, նրան մեղսագրված քրեաիրավական արարքին տալ ճիշտ քրեաիրավական որակում, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերից արարքը վերաորակել 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և այդ հոդվածի սանկցիայով սահմանել պատիժ:

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանն իր վերաքննիչ բողոքով հայտնել է, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, և այն պետք է բեկանել և կայացնել արդարացման դատական ակտ՝ պատճառաբանելով, որ դատավճռում դատարանը հաստատված է համարել իրականությանը չհամապատասխանող երկու հանգամանք, առաջինը, որ ինքը ապօրինի կանխիկացրել և յուրացրել կեղծ վարկերի ձևակերպմամբ տրամադրված գումարներ և երկրորդը, որ հանցավոր եղանակով ստացված գումարների իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցրել է: Իրականում այդ երկու գործողությունները մտացածին են և չեն հաստատվել գործով անցնող անձանց ցուցմունքներով:

Ղատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել նաև ամբաստանյալ Ռոբերտ Բաղդասարյանի շահերի պաշտպան Լ.Պողոսյանը և բողոքում նշված հիմնավորումներով խնդրել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը բեկանել՝ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, արարքը վերաորակել նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կիրառելով ՀՀ Ազգային ժողովի՝ 19.06.2009թ <համաներում հայտարարելու մասին> որոշման 1-ին կետի, 1-ին ենթակետը՝ նրան ազատել պատժի կրումից, հիմք ընդունելով պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մյուս հանգամանքները, նվազեցնել ամբաստանյալի նկատմամբ սահմանված պատժաչափը՝ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածների պահանջները:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄԸ.

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքները՝ բողոքների հիմքերի և հիմնավորումների

սահմաններում, լսելով բողոքներում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին պաշտպաններ Լ.Պողոսյանի, Ս.Կարապետյանի, ամբաստանյալ Խ. Շաբոյանի պատճառաբանությունները, մեղադրողի պատասխանները բողոքների դեմ, իրենց ներկայացված մեղադրանքի կապակցությամբ ամբաստանյալներ Ա.Բաղդասարյանի, Խ.Շաբոյանի պատճառաբանությունները, ինչպես նաև ուսումնասիրելով և վերլուծելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, դրանք գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ քրեական գործով ձեռք բերված ապացույցների ողջ համակցությունը՝ քրեական գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգում է այն հետևության, որ բերված վերաքննիչ բողոքները պետք է մերժել՝ ՀՀ Պեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. փետրվարի 04-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ Պեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, ամբաստանյալներ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին և Խաչատուր Ռուբենի Շաբոյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հանցանքների կատարման մեջ, դատավճռի հիմքում դրել է իր կողմից հետազոտված հետևյալ ապացույցները.

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանն ընդհանուր իրավասության դատարանում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր, զբաղվել է կենցաղային տեխնիկայի առուվաճառքով: Եղել է <Աղշինինվեստ> բանկի Վարդենիսի մասնաձյուղում հաճախորդ և համագործակցել է բանկի հետ: 2007թ. ընթացքում իրեն կանչել է մասնաձյուղի կառավարիչ Արմեն Բաղդասարյանը և խնդրել է օգնել բանկին, նշելով, որ բանկի ցուցանիշները պահելու համար բանկի խնդրահարույց վարկերը անբարեխիղճ վարկառուների փոխարեն շտապ մարելու համար իր հաշվին գումար է փոխանցված, որպեսզի ինքը ստանա այդ գումարները և վերադարձնի իրենց: Ինքը կատարել է նրա խնդրանքը, ստացել է այդ գումարները և ամբողջովին, լրիվ, անմիջապես, իրեն որևէ լուծա չպահելով, բոլորը տվել է Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին, առանց հասկանալու և գիտակցելու այդ գումարների ծագումը, բնույթը և նշանակությունը: Այսինքն, իրեն ընդամենը խնդրել է ստանալ նշված գումարները: Ինքը չի իմացել, որ նրանք այդ գումարները պետք է յուրացնեն: Նշել է նաև, որ մեղքը մասնակի է ընդունում միայն, որ գումարը ստացել է և վերադարձրել է կանխիկ բանկին՝ օժանդակել է: Հայտնել է, որ իր սխալը եղել է այն, որ ինքը գումարը ստացել և վերադարձրել է կառավարիչին: Ինքը որևէ հանցավոր համաձայնություն չի ունեցել, իր համաձայնությունը եղել է միայն բանկի գումարը կանխիկացնելու և վերադարձնելու, բանկին, այլ ոչ թե նախապես պայմանավորվածության է ձեռք բերել կեղծ վարկերի ձևակերպմամբ, այդ գումարները յուրացման եղանակով հափշտակելու և ստացված եկամուտները օրինականացնելու համար: Ինքը որևէ գումար չի հափշտակել, իրենը չի դարձրել, բանկի աշխատակից չի եղել: Իր գործողությունները չունեն որևէ շահադիտական բնույթ: Ինքը ստացել է գումարները և ամբողջությամբ, տեղում հանձնել է բանկի կառավարչին: Նշեց նաև, որ ինքը բանկի աշխատող չի եղել, ինքը հանդիսացել է բանկի հազարավոր հաճախորդներից մեկը և չէր կարող իմանալ և չէր իմացել այդ գումարների ծագումը, բնույթը, նշանակությունը, որը մինչև անգամ չէն իմացել բանկի մյուս աշխատակիցները, իսկ ինքը որպես հաճախորդը որտեղից պետք է իմանար: Հայտնել է նաև, որ չի ընդունում քաղաքացիական հայցի պահանջը:

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը նախաքննության ընթացքում

ցուցմունք է տվել այն մասին, որ 2006թ. հունվար ամսից մինչև 2008թ. հունիս ամիսն աշխատել է <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղում՝ որպես կառավարիչ: Իր աշխատանքային պարտականությունների մեջ են մտել, համապատասխան գործող կարգի՝ քաղաքացիներին տրամադրել վարկեր, ներգրավել ավանդներ, սպասարկել հաճախորդներին, ղեկավարել մասնաձյուղի աշխատանքները և այլն: 2007թ. սկզբներին մասնաձյուղում անբարեխիղճ վարկառուների փոխարեն իր անձնական միջոցներով կատարել է վարկերի մարումներ նրանց փոխարեն, բացի այդ, պարտքով ուրիշ քաղաքացիներից, ծանոթներից և բարեկամներից վերցրել է գումարներ անբարեխիղճ վարկառուների վարկերը մարելու համար: Անբարեխիղճ վարկառուների վարկերը մարելու նպատակով 2007թ. ընթացքում տարբեր քաղաքացիների անուններով բանկի հետ համագործակցող <Խ.Շաբոյան> Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանի և <Վասարաթ> ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Համբարձումյանի միջոցով ձևակերպել է կենցաղային վարկեր կենցաղային ապրանք վերցնելու փոխարեն, ստացել է այդ վարկերի գումարները և կատարել խնդրահարույց վարկերի մարումներ, ընդ որում, քաղաքացիները, որոնց անվամբ ձևակերպել է վարկեր, տեղյակ չեն եղել այդ մասին, որ իրենց անվամբ ձևակերպվել է վարկ: <Խաչատուր Շաբոյան> Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանը և <Վասարաթ> ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Համբարձումյանը գնացել են անօրինականությունների իր խնդրանքով, ապրանքների փոխարեն իրեն տվել ապրանքների գումարները: Անօրինական վարկեր է ձևակերպվել մոտ 106 քաղաքացիների անվամբ մեկ տարվա ընթացքում, իսկ դրանցով յուրացված գումարը չի գերազանցել 30.000.000 ՀՀ դրամը, որի մնացորդը 11.02.2010թ. դրությամբ կազմել է 14.092.001 ՀՀ դրամ: Իր կողմից ձևակերպված անօրինական վարկերից մոտ 27.000.000 ՀՀ դրամն ամբողջությամբ ուղղվել է իր վերցրած անօրինական վարկերի մարումների համար, իսկ մյուս մասը՝ եղած խնդրահարույց վարկերի տոկոսների և տույժ-տուգանքի մարման համար: Հայտնել է, որ իր կատարած անօրինականությունների մասին տեղյակ է եղել մասնաձյուղի վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանը, որն անձամբ պատրաստել է այդ գործերը, ձևակերպել կենցաղային վարկեր: Անօրինական վարկերը ձևակերպելու համար օգտագործել են նախկինում մասնաձյուղում մարված վարկային գործերում առկա փաստաթղթերը, նրանցից վերցնելով համապատասխան փաստաթղթեր և ձևակերպել նոր վարկեր, որոնց հիման վրա ինքը գրել է հաշվապահական կարգադրություն գումարները նշված կազմակերպությունների հաշվեհամարներին փոխանցելու վերաբերյալ: Վարկառուների փոխարեն վարկի ստացման փաստաթղթերում ստորագրել է ինքը և գումարները փոխանցվել <Վասարաթ> ՍՊ ընկերության և <Խաչատուր Շաբոյան> Ա/Ձ-ի հաշվեհամարներին, որոնց տնօրենները գումարները ստանալուց հետո ամբողջությամբ փոխանցել են իրեն, որոնք ինքը տնօրինել է, առանց քաղաքացիների գիտության: Տարբեր քաղաքացիների անուններով անօրեն վարկեր է ձևակերպել և վարկառուների փոխարեն մարումներ կատարել, որպեսզի մասնաձյուղի ցուցանիշները բարձր լինեն և մասնաձյուղի անձնակազմը կարողանար պարզևատրումներ ստանալ:

Ղատաքնության ընթացքում ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը հայտնել է, որ կատարված կեղծ գործարքների մասին ինքն ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանին չի հայտնել, նրան կեղծ գործարքներից որևէ գումար չի տվել: Հայտնել է նաև, որ չի ընդունում քաղաքացիական հայցի պահանջը:

Ընդհանուր իրավասության դատարանն ամբաստանյալներ Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի կողմից կատարած հանցավոր արարքները հիմնավորված է համարել նաև դատաքնության ընթացքում հետազոտված և դատավճռում շարադրված հետևյալ ապացույցներով.

Տուժողի և քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը, հանդիսանալով <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղի կառավարիչը, 2006թ. հունվարից մինչև 2008թ. հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում, նախնական համաձայնության է եկել նույն մասնաձյուղի վարկային բաժնի մասնագետ Հովհաննես Համբարձումյանի, <Խաչատուր Շաբոյան> Ա/Զ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանի և <Վասարաթ> ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ կեղծ վարկերի ձևակերպմամբ առանձնապես խոշոր չափերի գումար կանխիկացնելու միջոցով յուրացնելու շուրջ: Նախնական համաձայնության գալուց հետո 2006թ. հուլիսի 21-ից մինչև 2007թ. նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում, առանց մասնաձյուղի վարկառուների գիտության, Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը ձևակերպել են թվով 198 կեղծ վարկային պայմանագիր, որոնց հիման վրա <Խաչատուր Շաբոյան> Ա/Զ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանը և <Վասարաթ> ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանը <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղից ստացել են 53.661.800 ՀՀ դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումար՝ ներկայացնելով նշված գումարներն իրենց տնօրինման տակ գտնվող խանութներում, որպես ապառիկ կարգով վաճառված կենցաղային տեխնիկայի դիմաց վճարված գումար: Այնուհետև, Խաչատուր Շաբոյանի և Հովիկ Խաչատրյանի կողմից կանխիկացված վերը նշված գումարներն առձեռն փոխանցվել են Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին, որոնք նպատակ ունենալով թաքցնել հափշտակության փաստերը և խուսափել պատասխանատվությունից, ստացված գումարների որոշ մասով կատարել են կեղծ վարկերի մարումներ, իսկ մնացած մասն օգտագործել են անձնական կարիքների համար: Քրեական գործով տուժող և քաղաքացիական հայցվոր ճանաչված <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերությունը կատարված հանցագործությամբ պատճառված վնասը բռնագանձելու պահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան և խնդրել է. 1. ամբաստանյալներ Արմեն Բաղդասարյանից, Հովհաննես Համբարձումյանից, Խաչատուր Շաբոյանից և Հովիկ Խաչատրյանից համապարտության կարգով հօգուտ քաղաքացիական հայցվոր <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության բռնագանձել 50.593.545 ՀՀ դրամ: 2. <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերությանը պատճառված 25.146.438 ՀՀ դրամ, ինչպես նաև 1.157 ԱՄՆ դոլար (1 ԱՄՆ դոլարը = 384,65 ՀՀ դրամ՝ առ 26.02.2010թ.) հիմնական վնասին, սկսած 29.03.2010 թվականից մինչև վնասն ամբողջությամբ հատուցելու (պարտավորությունը դադարելու) օրը, հաշվեգրել և բռնագանձել տոկոսներ՝ պայմանագրերով նախատեսած պայմաններով: 3. Բռնագանձումը տարածել մեղադրյալներ Արմեն Բաղդասարյանին, Հովհաննես Համբարձումյանին, Խաչատուր Շաբոյանին և Հովիկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա: Վկաներ Հարություն Չեպեջյանի, Լուսինե Մինասյանի, Անահիտ Սարգսյանի, Խաչատուր Մանուկյանի, Հայկ Մադոյանի, Սամվել Մինասյանի, Ալա Գրիգորյանի և Արտակ Ղարիբյանի ցուցմունքներով այն մասին, որ <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղում, որևիցե վարկ չեն ձևակերպել, սակայն նշված բանկում գրավադրել են իրենց ոսկյա զարդերը, որոնք էլ ստացված գումարը մարելուց հետո հետ են ստացել բանկից, իսկ ինչ վերաբերում է իրենց անուններով <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղում կենցաղային տեխնիկա գնելու նպատակով վարկեր ձևակերպված լինելու, այդ մասին տեղեկացել են նախաքննության ընթացքում հարցաքննության ժամանակ: Վկաներ Գարիկ Գրիգորյանի, Գագիկ Բարսեղյանի, Կարեն Աղաբեկյանի, Սվետոլկ Ամյանի, Ռայա Ավանեսյանի, Արկադի

Նարինյանի, Նաիրա Մկրտչյանի, Ատոմ Ղարիբյանի, Հայկ Արշակյանի, Արման Համբարձումյանի, Ռուբեն Հովհանյանի, Հարություն Ազարյանի, Նաիրա Ազարյանի, Արարատ Երիցյանի, Կարինե Միրզոյանի, Քրիստինե Պետրոսյանի, Մելանյա Պետրոսյանի, Հասմիկ Խաչատրյանի, Աղունիկ Նալբանդյանի, Էմմա Հակոբյանի, Լենդրուշ Ղարիբյանի, Լավուրիկ Ղարիբյանի, Վահագն Նալբանդյանի, Արփիկ Եղեյանի, Տաթևիկ Պետրոսյանի, Սմբատ Հակոբյանի, Աղաբեկ Սարգսյանի, Նելսոն Կոլոտյանի, Անահիտ Համբարձումյանի, Գրիգոր Սահակյանի, Սաթենիկ Շաբոյանի, Ստելլա Մկրտչյանի, Էդգար Մինասյանի, Արմինե Շաբոյանի, Ռաֆյել Գրիգորյանի, Գրետա Հովհանյանի, Եվգենիա Մելքունովայի, Կարինե Մխոյանի, Թամարա Ղարիբյանի, Ռուզաննա Մամիկոնյանի, Անահիտ Սևոյանի, Գևորգի Օսիպովայի և Գեղեցիկ Հակոբյանի ցուցմունքներով այն մասին, որ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաձյուղի, ինչպես նաև այլ բանկերի հետ որևիցե գործարք չեն կատարել և տեղյակ չեն եղել, որ իրենց անուններով «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաձյուղում վարկեր են ձևակերպված կենցաղային տեսնիկա գնելու նպատակով:

Վկա Անահիտ Շոյանի ցուցմունքով այն մասին, որ 2003թ.-ից աշխատում է «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաձյուղում, որպես գլխավոր հաշվապահ և իր աշխատանքային պարտականությունների մեջ են մտնում մասնաձյուղի հաշվապահական հաշվառման վարումը, հաշվետվությունների և աշխատավարձերի կազմումը ու վճարումը, հիմնական միջոցների և արագաշարժ առարկաների հաշվառումը, դրամարկղի փակումը բոլոր պատասխանատու անձանց հետ: Վարկային գործերն ինքն անձամբ չի ձևակերպում և չի տեսնում, թե ինչ փաստաթղթեր է վարկային գործում լինում: Բոլոր վարկային գործերը կազմվում են վարկային բաժնի մասնագետները և նրանց կողմից կազմվում է դրական կամ բացասական եզրակացություն վարկը տրամադրելու վերաբերյալ: Դրական եզրակացության ժամանակ վարկային մասնագետը կազմում է հաշվապահական կարգադրություն, վարկի ձևակերպման վերաբերյալ և այն ստորագրում է կառավարիչի հետ միասին: Հաշվապահական կարգադրությունն արագրված փոխանցվում է իրեն, որի հիման վրա հաշվապահության մասնագետները բացում են հաշիվ, ձևակերպում վարկ և գումարը փոխանցում բանկի հետ համագործակցող կազմակերպության հաշվին: Գումարը փոխանցելուց հետո համագործակցող ընկերությունն իր դրամական չեկով մոտենում է հաշվապահության մասնագետին, դուրս գրում գումարը, որից հետո դրամարկղից ստանում է կանխիկ գումարը: Արմեն Բաղդասարյանի և Հովհաննես Համբարձումյանի կողմից կատարված կեղծիքների մասին տեղեկացել է վերջին ժամանակաշրջանում, երբ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության վարչության անվտանգության բաժնի աշխատակիցները կատարել են ստուգումներ և հայտնաբերել նրանց կողմից կեղծված վարկային գործերն ու այդ մասին հայտնել իրավապահ մարմիններին: Իրեղեն ապացույց ձևանշված «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերությունից վարչության նախագահ Ն.Կարամանուկյանից ստացված 2010թ. փետրվարի 26-ի թիվ 05-418 հանցագործության մասին հաղորդմամբ, ըստ որի՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաձյուղում կատարված ծառայողական քննության արդյունքներով պարզվել է, որ մասնաձյուղի նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանը և վարկային նախկին մասնագետ Հովհաննես Համբարձումյանի 2006-2007թվականների ընթացքում, կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ առանց մասնաձյուղի վարկառուների գիտության նրանց անվամբ վարկային փաստաթղթերով ձևակերպել են վարկ հատկացնելու վերաբերյալ 396 պայմանագրեր և ստացված 95.788.080 ՀՀ դրամ ու 27.616 ԱՄՆ դոլար գումարները մասնաձյուղի հետ համագործակցող «խաչատուր Շաբոյան» ԱԶ-ի և «Վասարաթ»

ՍՊ ընկերության օժանդակությամբ հափշտակել են: 2010թ. մայիսի 6-ից մինչև մայիսի 16-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Կենտրոնական բանկի մասնագետների կողմից <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղում իրականացված 2006-2008թ.թ. ստուգման արդյունքներով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն՝ թվով 198 կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010թ. մարտի 29-ի դրությամբ կազմել է 53.661.800 ՀՀ դրամից՝ 25.146.438 ՀՀ դրամ պարտք, տույժ-տուգանքները 22.991.977 ՀՀ դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տույժ-տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար:

Գագիկ Բարսեղյանի, Անահիտ Բարսեղյանի, Նունե Բարսեղյանի, Կարո Բուդոյանի, Ալվարո Բեժանյանի, Արշակ Դաբաղյանի, Մայախանն Դարբինյանի, Հովիկ Դավթյանի, Սարգիս Դավթյանի, Արման Դաշյանի, Գեորգի Դուլյանի, Ալբերտ Գառնարատյանի, Գրիմիկ Գասպարյանի, Հովհաննես Գասպարյանի, Արմեն Գալստյանի, Աշոտ Գալեջյանի, Ալլա Գրիգորյանի, Ալետա Գրիգորյանի, Հմայակ Գրիգորյանի, Ռաֆայել Գրիգորյանի, Աշոտ Գևորգյանի, Վասիլի Գյուլումյանի, Ռուզաննա Աբգարյանի, Նառա Աբգարյանի, Աստղիկ Աբրահամյանի, Հարություն Ազարյանի, Նաիրա Ազարյանի, Ստեփան Արզոյանի, Հայկ Արշակյանի, Ահարոն Ալբերտյանի, Ալլա Ալոյանի, Արմեն Ալլահվերդյանի, Ռաֆիկ Ավագյանի, Ռայա Ավանեսյանի, Թամարա Ավետիսյանի, Սուրիկ Ավետիսյանի, Կարեն Աղաբեկյանի, Արմեն Աղաջանյանի, Անյուտա Աղաջանյանի, Գայանե Ափիսարյանի, Սվետլիկ Ամյանի, Սարգիս Անտոնյանի, Վարուժան Թադևոսյանի, Վարուժան Թադևոսյանի, Հասմիկ Թարխանյանի, Արթուր Չոբանյանի, Մխիթար Թովմասյանի, Վարդանուշ Թումանյանի, Լենա Ջումանյանի, Գամակ Պռոշյանի, Հարություն Չեպեջյանի, Սառա Պետրոսյանի, Տաթևիկ Պետրոսյանի, Մակիչ Պետրոսյանի, Քրիստինե Պետրոսյանի, Մելանյա Պետրոսյանի, Նորա Պետրոսյանի, Արամ Հարությունյանի, Ռաֆայել Հարությունյանի, Սոս Հարությունյանի, Սոնյա Հովակիմյանի, Էմմա Հակոբյանի, Ալինա Հակոբյանի, Հենրիկ Հակոբյանի, Սուսաննա Հակոբյանի, Սմբատ Հակոբյանի, Ծովինար Հակոբյանի, Էլիզա Համբարձումյանի, Արտակ Համբարձումյանի, Արման Համբարձումյանի, Անահիտ Համբարձումյանի, Անուշ Համբարձումյանի, Հակոբ Հոխանյանի, Աննա Հովհանյանի, Ռուբեն Հովհանյանի, Ավետիք Հովաննիսյանի, Միխայիլ Հովհաննեսյանի, Ալեքսան Հունանյանի, Արմեն Խաչատրյանի, Հասմիկ Խաչատրյանի, Ռազմիկ Խաչատրյանի, Գևորգ Սարգսյանի, Աղաբեկ Սարգսյանի, Անահիտ Սարգսյանի, Հայկարամ Սարգսյանի, Հրանտ Սարգսյանի, Նելլի Սարգսյանի, Գրիգոր Սահակյանի, Էդվարդ Սահակյանի, Եդվարդ Սահակյանի, Արթուր Սահակյանի, Արտեմ Սահակյանի, Արմանուշ Սահակյանի, Սարգիս Սահակյանի, Մարտին Սահակյանի, Ռազմիկ Սամվելյանի, Ֆրիդոն Սաֆարյանի, Արշալույս Սիմոնյանի, Արաքսյա Սողոմոնյանի, Գոհար Խլոյանի, Սեդրակ Խլոյանի, Անահիտ Սևոյանի, Համլետ Վարդանյանի, Սևակ Վարդանյանի, Կարեն Վարդանյանի, Գագիկ Կարապետյանի, Գառնիկ Կարապետյանի, Գևորգ Կարապետյանի, Սևակ Կարապետյանի, Սամվել Կարճիկյանի, Նվեր Կոլոտյանի, Նելսոն Կոլոտյանի, Գոռ Տոնոյանի, Արմենուհի Տերյանի, Վլադիմիր Տերյանի, Հայկ Մադոյանի, Գայանե Ղազարյանի, Զենֆերա Ղարիբյանի, Արտակ Ղարիբյանի, Ատոմ Ղարիբյանի, Թամարա Ղարիբյանի, Լավուրիկ Ղարիբյանի, Սոխակ Ղարիբյանի, Ռուբեն Ղարիբյանի, Լենդրուշ Ղարիբյանի, Վերգինե Ղարիբյանի, Միեր Ղարիբյանի, Նինա Ղարիբյանի, Անուշ Մարտիրոսյանի, Հովիկ Մանուկյանի, Գայանե Մանուկյանի, Արսեն Մանուկյանի, Արամ Միրզոյանի, Կարինե Միրզոյանի, Ռազմիկ Միսակյանի, Զարիկ Մինասյանի, Էդգար Մինասյանի, Արծրուն Մինասյանի, Արեգնազ Մինասյանի, Սամվել Մինասյանի, Լուսինե Մինասյանի, Մանվել Մինասյանի, Շահում Մինասյանի, Քնարիկ Մովսիսյանի, Արթուր Մովսիսյանի, Գեղեցիկ

Մուրադյանի, Լևոն Երանոսյանի, Նարինե Երանոսյանի, Կարինե Մխոյանի, Վիկտոր Մխեյանի, Արմինե Մկրտչյանի, Սամվել Մկրտչյանի, Ստելլա Մկրտչյանի, Վարդուշ Մկրտչյանի, Նաիրա Մկրտչյանի, Սպարտակ Մելիքյանի, Սվետա Մելիքյանի, Լևոն Մելիքյանի, Եվգենիա Մելքունովայի, Սիխաիլ Մելքունովինի, Սամվել Մնացականյանի, Արամի Մնացյանի, Արմինե Շաբոյանի, Իշխանուհի Շաբոյանի, Վահե Շաբոյանի, Գոհարիկ Շիրվանյանի, Արթուր Շելունցի, Ժորա Նազարյանի, Արկադի Նարինյանի, Աղունիկ Նալբանդյանի, Վահագն Նալբանդյանի, Սարիամ Օհանյանի և Գեորգի Օսիպովի անուններով ձևակերպված վարկային գործերում բացակայում են հետևյալ փաստաթղթերը՝ ապրանք ձեռք բերելու համար տեղեկանք՝ լրացված համագործակցող կազմակերպության կողմից, սպառողական վարկի ստացման Դիմում-Հայտ, անձնագիր, առկայության դեպքում՝ սոցիալական քարտի պատճեն, տեղեկանք գրանցման, հաշվառման վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից, տեղեկություններ վարկառուի և ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ, վարկերի տրամադրման վերաբերյալ եզրակացությունները, որոնք պետք է կազմվեն <Վարդենիս> մասնաձյուղի վարկային մասնագետի կողմից, վարկերի տրամադրման վերաբերյալ <Վարդենիս> մասնաձյուղի վարկային կոմիտեի գրավոր որոշումները, վարկային և գրավի պայմանագրերը, ապրանքի հանձնումը-ընդունումը հաստատող փաստաթղթերը, սպառողական վարկերի տրամադրման վերաբերյալ Վարկային բաժնին ուղղված գրավոր կարգադրությունները տրված <Վարդենիս> մասնաձյուղի կառավարչի կողմից:

Այդուհանդերձ, <Վարդենիս> մասնաձյուղում առկա են <Վարդենիս> մասնաձյուղի հաշվապահությանը տրված վարկի տրամադրման վերաբերյալ գրավոր կարգադրությունները, որոնց վրա դրված են <Վարդենիս> մասնաձյուղի նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանի և վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանի ստորագրությունները, որոնց հիման վրա <Վարդենիս> մասնաձյուղի հաշվապահության կողմից գումարները փոխանցվել են <Վասարաթ> ՍՊ ընկերության և <Խաչատուր Շաբոյան> ԱԶ-ի հաշվեհամարներին:

Վերը նշված անձանց անուններով կազմված վարկերի մասով ստուգող խմբի բացատրություններով այն մասին, որ հիմք ընդունելով հաշվետվության մեջ նկարագրված իրավական ակտերի չպահպանման դեպքերը, հաշվապահական ձևակերպումները, ինչպես նաև <2.5 Կանխիկի մուծման հայտարարագրերի վրա դրված ստորագրությունների ուսումնասիրություն> բաժնով կատարված ստուգման արդյունքները վերստուգող խումբը եկել է այն եզրահանգմանը, որ նշված վարկերից՝ դեպքերից մեծամասնությունում <Վարդենիս> մասնաձյուղում ֆիզիկական անձանց անուններով ձևակերպվել և համագործակցող կազմակերպությունների միջոցով կանխիկացվել են գումարներ, քանի որ <Վարդենիս> մասնաձյուղի նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանի և վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանի կողմից <Խաչատուր Շաբոյան> ԱԶ-ի և <Վասարաթ> ՍՊ ընկերության հետ համագործակցությամբ կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով սպառողական վարկերի տրամադրման ընթացքում բանկի ներքին իրավական ակտերով չառաջնորդվելը հանդիսացել է գործարար սովորույթ, ուստի ստուգող խմբի կարծիքով <Վարդենիս> մասնաձյուղում առկա փաստաթղթերի ստուգման արդյունքում հնարավոր չի եղել հստակ պարզել, թե նշված վարկի գումարները փաստացի ու՞մ կողմից են տնօրինվել, ովքեր են իրականացրել նշված վարկերի ընթացիկ մարումները:

<Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղից 2010թ. մարտի 18-ին առգրավված թվով 198 կեղծ վարկային գործերով, մասնավորապես Գագիկ Վիկտորի

Բարսեղյանի, Անահիտ Սեյրանի Բարսեղյանի, Նունե Դավիթի Բարսեղյանի, Կարո Կրեժի Բուդոյանի, Ալվարդ Սերյոժայի Բեժանյանի, Արշակ Արտեմի Դաբադյանի, Մայախան Հովհաննեսի Դարբինյանի, Հովիկ Լեռնիկի Դավթյանի, Սարգիս Հայկի Դավթյանի, Արման Արամի Դաշյանի, Գեորգի Արայի Դուլյանի, Ալբերտ Նիկոլայի Գարնարատյանի, Գրիմիկ Ալբերտի Գասպարյանի, Հովհաննես Օնիկի Գասպարյանի, Արմեն Իշխանի Գալստյանի, Աշոտ Գարեգինի Գալեշյանի, Ալլա Ալֆրեդի Գրիգորյանի, Ալետա Ժորայի Գրիգորյանի, Հնայակ Սոսի Գրիգորյանի, Ռաֆայել Բաբկենի Գրիգորյանի, Աշոտ Ավետիսի Գևորգյանի, Վասիլի Սարգի Գյուլումյանի, Ռուզաննա Ռոմիկի Աբգարյանի, Նառա Արգիշտի Աբգարյանի, Աստղիկ Լյուդվիկի Աբրահամյանի, Հարություն Ալբերտի Ազարյանի, Նաիրա Գագիկի Ազարյանի, Ստեփան Սերյոժայի Արզոյանի, Հայկ Ժորիկի Արշակյանի, Ահարոն Մանուկի Ալբերտյանի, Ալլա Ռուանդի Ալոյանի, Արմեն Իվանի Ալլահվերդյանի, Ռաֆիկ Էդիկի Ավագյանի, Ռայա Նիկոլայի Ավանեսյանի, Թամարա Հարությունի Ավետիսյանի, Սուրիկ Խաչատուրի Ավետիսյանի, Կարեն Ռազմիկի Աղաբեկյանի, Արմեն Սերգեյի Աղաջանյանի, Անյուտա Վելիկի Աղաջանյանի, Գայանե Արիստիանի, Սվետլկա Միխայիլի Ամյանի, Սարգիս Պավելի Անտոնյանի, Վարուժան Խաչիկի Թադևոսյանի, Վարուժան Խաչիկի Թադևոսյանի, Հասմիկ Գագիկի Թարխանյանի, Արթուր Լևոնի Զորանյանի, Մխիթար Գագիկի Թովմասյանի, Վարդանուշ Թումասի Թումանյանի, Լենա Սերգեյի Զումանյանի, Գագիկ Ստեփանի Պեռոյանի, Հարություն Ռոբերտի Զեպեշյանի, Սառա Հրանտի Պետրոսյանի, Տաթևիկ Ռուբիկի Պետրոսյանի, Մակիշ Լյուդվիկի Պետրոսյանի, Քրիստինե Ռուբիկի Պետրոսյանի, Մելանյա Ռաֆիկի Պետրոսյանի, Նորա Արամի Պետրոսյանի, Արամ Ռոբերտի Հարությունյանի, Ռաֆայել Սարգսի Հարությունյանի, Սոս Հարությունյանի, Սոնյա Սահակի Հովակիմյանի, Էմմա Սուրիկի Հակոբյանի, Ալինա Թելմանի Հակոբյանի, Հենրիկ Արամայիսի Հակոբյանի, Սուսաննա Խաչիկի Հակոբյանի, Սմբատ Խաչիկի Հակոբյանի, Ծովիմար Աշոտի Հակոբյանի, Էլիզա Խաչիկի Համբարձումյանի, Արտակ Գագիկի Համբարձումյանի, Արման Գագիկի Համբարձումյանի, Անահիտ Խաչիկի Համբարձումյանի, Անուշ Ավետիքի Համբարձումյանի, Հակոբ Մնացի Հոխանյանի, Աննա Արսենի Հովհանյանի, Ռուբեն Սարիբեկի Հովհանյանի, Ավետիք Ֆահրադի Հովաննիսյանի, Միխայիլ Հովհաննեսի Հովհաննեսյանի, Ալեքսան Բաբկենի Հունանյանի, Արմեն Գրիշայի Խաչատրյանի, Հասմիկ Լեռնիկի Խաչատրյանի, Ռազմիկ Գարեգինի Խաչատրյանի, Գևորգ Ռազմիկի Սարգսյանի, Աղաբեկ Բաղիշի Սարգսյանի, Անահիտ Սարգիսի Սարգսյանի, Հայկարամ Գրիգորի Սարգսյանի, Հրանտ Լևոնի Սարգսյանի, Նելլի Գրիշայի Սարգսյանի, Գրիգոր Արամի Սահակյանի, Էդվարդ Աշոտի Սահակյանի, Էդվարդ Սարգսի Սահակյանի, Արթուր Արմենակի Սահակյանի, Արտեմ Աշոտի Սահակյանի, Արմանուշ Սերյոժայի Սահակյանի, Սարգիս Ռուցենի Սահակյանի, Մարտին Նիկոլայի Սահակյանի, Ռազմիկ Խաչատուրի Սամվելյանի, Ֆրիդոն Մնացականի Սաֆարյանի, Արշալույս Գագիկի Սիմոնյանի, Արաքսյա Վլադիմիրի Սողոմոնյանի, Գոհար Զավենի Խլոյանի, Սեդրակ Արմենի Խլոյանի, Անահիտ Վահագնի Սևոյանի, Համլետ Սուրենի Վարդանյանի, Սևակ Վանիկի Վարդանյանի, Կարեն Ապրեսի Վարդանյանի, Գագիկ Սեդրակի Կարապետյանի, Գառնիկ Սեդրակի Կարապետյանի, Գևորգ Աշոտի Կարապետյանի, Սևակ Գևորգի Կարապետյանի, Սամվել Ժիրայրի Կարճիկյանի, Նվեր Լիպարիտի Կոլոտյանի, Նելսոն Անանիկի Կոլոտյանի, Գուր Հրանտի Տոնոյանի, Արմենուհի Շիրատի Տերյանի, Վլադիմիր Գրիգորի Տերյանի, Հայկ Սերյոժայի Մադոյանի, Գայանե Թորգոմի Ղազարյանի, Զենաֆերա Ռաֆիկի Ղարիբյանի, Արտակ Սոսի Ղարիբյանի, Ատոմ Անդրանիկի Ղարիբյանի, Թամարա Հարությունի Ղարիբյանի, Լավուրիկ Բարեղամի Ղարիբյանի, Սոխակ Սամվելի Ղարիբյանի, Ռուբեն Հայկի Ղարիբյանի, Լենդրուշ Ռուբենի Ղարիբյանի, Վերգինե Արշակի Ղարիբյանի, Միեր Սերյոժայի Ղարիբյանի, Նինա Անդրանիկի Ղարիբյանի, Անուշ Լևոնի

Մարտիրոսյանի, Հովիկ Մանասի Մանուկյանի, Գայանե Լավրենտի Մանուկյանի, Արսեն Գառնիկի Մանուկյանի, Արամ Աբրահամի Միրզոյանի, Կարինե Ալեքսանդրի Միրզոյանի, Ռազմիկ Գեորգիի Միսակյանի, Զարիկ Ռաֆիկի Մինասյանի, Էդգար Անդրանիկի Մինասյանի, Արծրուն Փայլակի Մինասյանի, Արեգնազ Արամի Մինասյանի, Սամվել Սուրիկի Մինասյանի, Լուսինե Կամոյի Մինասյանի, Սանվել Լյովայի Մինասյանի, Շահում Սամվելի Մինասյանի, Քնարիկ Մարտունի Մովսիսյանի, Արթուր Բաղիշի Մովսիսյանի, Գեղեցիկ Արտաշի Մուրադյանի, Լևոն Կարենի Երանոսյանի, Նարինե Լևոնի Երանոսյանի, Կարինե Սամվելի Մխոյանի, Վիկտոր Մարտիկի Մխեյանի, Արմինե Սերոյոսյանի Մկրտչյանի, Սամվել Վեմիրի Մկրտչյանի, Ստելլա Վահրամի Մկրտչյանի, Վարդուշ Ավետիքի Մկրտչյանի, Նաիրա Կարենի Մկրտչյանի, Սպարտակ Մկրտչի Մելիքյանի, Ավետա Հովհաննեսի Մելիքյանի, Լևոն Գարեգինի Մելիքյանի, Եվգենիա Գենադիի Մելքունովայի, Միխայի Գենադիի Մելքունովինի, Սամվել Մհերի Մնացականյանի, Արման Արամի Մնացյանի, Արմինե Գևորգի Շաբոյանի, Իշխանուհի Թորոսի Շաբոյանի, Վահե Սպարտակի Շաբոյանի, Գոհարիկ Զարմիկի Շիրվանյանի, Արթուր Գենադիի Շելունցի, Ժորա Աբրահամի Նազարյանի, Արկադի Սուրենի Նարինյանի, Աղունիկ Հրաչիկի Նալբանդյանի, Վահագն Սամսունի Նալբանդյանի, Մարիամ Բաբկենի Օհանյանի, Գեորգի Արամի Օսիպովի, Ալվարո Ղազարի Առաքելյանի, Արարատ Սերգեյի Երիցյանի, Գարիկ Ռազմիկի Գրիգորյանի, Գրետա Ալեքսանի Հովհանյանի, Շիրազ Աշոտի Սենամանուկյանի, Խաչատուր Լևոնի Մանուկյանի, Սվետա Հովհաննեսի Մելիքյանի, Արփիկ Լիպարիտի Եղեյանի, Սաթենիկ Հուսիկի Շաբոյանի, Ավետիք Ռուբենի Զարոյանի, Հայկ Հրաչիկի Ադիբեկյանի, Ալինա Համլետի Սարգսյանի, Ռուզաննա Ազիզի Մանուկյանի, Սամվել Սերգեյի Նալբակյանի, Արթուր Միշայի Ասատրյանի, Գեղեցիկ Մամիկոնի Հակոբյանի, Արմեն Մեսրոպի Կյուրեղյանի, Գագիկ Սերոյոսյանի Միերյանի, Հովսեփ Գևորգի Խաչատրյանի, Տիրուհի Հարությունի Մկրտչյանի և Մառլենա Ադիբեգի Գրիգորյանի անուններով լրացված:

<Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղից 2010թ. մարտի 18-ին առգրավված <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ տնօրեն Խաչատուր Շաբոյանի կողմից բանկից գումարներ կանխիկացնելու վերաբերյալ թիվ 995069, 995072, 995070, 378940, 378944, 995056, 995073, 995071, 378950, 995059, 995065, 378947, 378942, 995063, 995062, 378949, 378946, 378945, 995052, 995066, 995053, 995055, 995061, 378948, 995068, 378941 և 995058 անդորրագրերը, ինչպես նաև <Վասարաթ> ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի կողմից բանկից գումարներ կանխիկացնելու վերաբերյալ թիվ 995884, 995881, 995885, 996155, 995883, 995877, 996157, 996152, 843340, 843343, 843341, 996171, 843348, 996153, 843349, 843346, 995879, 996158, 996151, 843344, 996166, 843338, 995878, 843345, 996168, 996174, 996172, 996173, 843350, 996160, 996156, 843347, 996170, 995876, 843339, 996159, 996161, 996169, 996154, 995882, 995886, 995880 և 996175 անդորրագրերով:

Ապացույցների ազատ գնահատման սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում հանցավորին հանձնված ուրիշի գույքի հափշտակության՝ յուրացման կամ վատնման համար, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով:

Յուրացումը կամ վատնումը սեփականության դեմ ուղղված այլ հանցանքներից, մասնավորապես, խարդախությունից, տարբերվում է նրանով, որ հանցավորը հափշտակում է իրեն վստահված գույքը: Այդ գույքը գտնվում է նրա օրինական տիրապետման ներքո, դրա նկատմամբ հանցավորը ունենում է որոշակի լիազորություններ: Յուրացման կամ վատնման եղանակով հանցավորը իր օրինական տիրապետման ներքո գտնվող գույքը ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով դարձնում է իրենը կամ հանձնում է այլ անձի՝ օգտագործելով այդ գույքի նկատմամբ իր լիազորությունները: Հանցավորի՝ ուրիշի գույքի նկատմամբ այդ լիազորությունները կարող են առաջանալ պաշտոնական պարտականությունների, պայմանագրային հարաբերությունների, հատուկ հանձնարարության, օրենքով սահմանված այլ հիմքերով:

Սեփականության դեմ ուղղված մյուս հանցագործությունների, մասնավորապես, խարդախության դեպքում, հանցավորը հափշտակվող գույքի նկատմամբ որևէ լիազորությամբ օժտված չի լինում, կամ էլ այդ գույքը կարող է նրան հանձնված լինել միայն տեխնիկական կամ արտադրական նպատակներով:

Խարդախության դեպքում գույքի սեփականատերը կամ օրինական տիրապետողը գտնվում է մոլորության մեջ, գույքը հանձնելիս նա այդ գույքը վերցնողին որևէ օրինական լիազորությամբ չի օժտում, բացի այդ, խախտախության դեպքում հանցավորի դիտավորությամբ, ի սկզբանե, ընդգրկված է լինում հափշտակել գույքը, մինչդեռ, յուրացման կամ վատնման ժամանակ հանցավորին գույքը հանձնելու, նրան այդ գույքի նկատմամբ լիազորություններ տալու պահին հանցավորի մոտ հափշտակության դիտավորությունը բացակայում է:

Հատուկ են նաև յուրացման կամ վատնման սուբյեկտները, դրանք անձինք են, որոնց որոշակի լիազորությամբ վստահված է ուրիշի գույքը: Գույքի հանձնումը /կամ վստահումը/ կատարվում է գրավոր ձևակերպմամբ/պայմանագիր, հրաման, կարգադրություն/, որով գույքը հանձնվում է կոնկրետ անձի՝ որոշակի լիազորությամբ: Խարդախության սուբյեկտը ընդհանուր է՝ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում հանցավոր ձանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով:

Նշված հանցանքը օբյեկտիվ կողմից դրսևորվում է հանցավոր ձանապարհով ստացված գույքի փոխարկման, դրանց ձեռք բերման, տիրապետման, օգտագործման այն անձի կողմից, ով տեղյակ է եղել, որ դրանք իր կողմից ստանալու պահին հանդիսանում են հանցավոր

ճանապարհով ձեռք բերված եկամուտներ, նյութական արժեքների, դրանց առնչվող իրավունքների բնույթի, ծագման աղբյուրների, գտնվելու վայրի, շարժի կամ իրական պատկանելությունը թաքցնելու, խեղաթյուրելու կատարմամբ այն անձի կողմից, ով իմացել է, որ այդ արժեքները հանդիսացել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասը, որով ամբաստանյալ ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի պաշտպան Լ.Պողոսյանը վերաքննիչ բողոքով խնդրել է վերաորակել ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի արարքը, քրեական պատասխանատվություն է նախատեսում առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածը տեղադրված է նշված օրենսգրքի 22-րդ գլխի տակ՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ: Նշված գլխի տակ տեղադրված հանցագործությունների տեսակային օբյեկտը ՀՀ-ում նորմալ տնտեսական գործունեության ընթացքում նյութական արժեքների պատահարության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում, ինչպես նաև՝ ծառայությունների մատուցման ոլորտի հասարակական հարաբերություններն են:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով սահմանված հանցագործության անմիջական օբյեկտը առևտրային կամ այլ կազմակերպության գործունեության կարգի և դրանցում ծառայության օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Նշված հանցանքը օբյեկտիվ կողմից դրսևորվում է առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ օգտագործելով, անձանց, կազմակերպությունների կամ պետության օրինական շահերին էական վնաս պատճառելով, ծառայողի արարքի և նշված հետևանքի միջև պատճառական կապի առկայությամբ:

Վերը նշվածի համատեքստում քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ Վերաքննիչ դատարանը հիմնավորված է համարում, որ ամբաստանյալ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանը, 2006–2008թ.թ. հանդիսանալով <Արդշինինվեստբանկ> ՓԲԸ <Վարդենիս> մասնաձյուղի կառավարիչը, և ի պաշտոնե ունենալով նշված բանկի մասնաձյուղի դրամական միջոցների նկատմամբ լիազորություններ ունեցող անձ, 2006-2008 թվականների ընթացքում, համաձայնության է եկել <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաձյուղի վարկային բաժնի մասնագետ Հովհաննես Համբարձումյանի, <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հիմնադիր-տնօրեն Խաչատուր Շաբոյանի և <Վասարաթ> ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ կեղծ վարկերի ձևակերպմամբ տրամադրված առանձնապես խոշոր չափերի գումարները կանխիկացման եղանակով յուրացնելու և դրանք օրինականացնելու վերաբերյալ, այնուհետև, Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006թ. հուլիսի 21-ից մինչև 2007թ. նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում, առանց մասնաձյուղի վարկառուների գիտության, նրանց անվամբ ձևակերպել են կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկ հատկացնելու թվով 198 կեղծ պայմանագրեր 53.661.800 ՀՀ դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումարի, ապա, հանցավոր ճանապարհով ստացված գումարների իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, պայմանավորվածության համաձայն նույն ժամանակահատվածում, պարբերաբար փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող, միևնույն մասնաձյուղի հաճախորդ հանդիսացող <Խ.Շաբոյան> ՍԼ/Չ-ի և <Վասարաթ> ՍՊԸ-ի հաշվեհամարներին: Գումարները փոխանցելուց հետո Խաչատուր Շաբոյանը և Հովիկ Խաչատրյանը իրենց հաշվեհամարներից ստացել են Արմեն Բաղդասարյանի և

Հովհաննես Համբարձումյանի կողմից իրենց հաշվեհամարներին փոխանցված վերը նշված գումարները ապօրինի կանխիկացրել են իբր իրենց խանութներից ապառիկ կարգով վաճառել են կենցաղային տեխնիկա, որից հետո առձեռն ամբողջ գումարները փոխանցել են Ա. Բաղդասարյանին և Հ. Համբարձումյանին:

Յուրացման եղանակով հափշտակված գումարներից մի մասով կատարել են վարկերի մարումներ իրենց կողմից կատարված հանցանքը չբացահայտելու համար, իսկ մնացած մասը տնօրինել և ծախսել են անձնական կարիքների համար: ՀՀ Կենտրոնական բանկի մասնագետների կողմից <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաճյուղում իրականացված 2006-2008 թվականների ատուգման արդյունքներով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն՝ նշված կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010թ. մարտի 29-ի դրությամբ կազմել է 53.661.800 դրամից՝ 25.146.438 ՀՀ դրամ պարտք, տույժ տուգանքները 22.991.977 դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից՝ 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տույժ տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար, այսինքն հանցագործությունում:

Իսկ Խաչատուր Ռուբենի Շաբոյանը, հանդիսանալով <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հիմնադիր-տնօրենը և ունենալով ընկերության միջոցների՝ այդ թվում՝ նաև ֆինանսական, լիազորություններ, զբաղվելով կենցաղային տեխնիկայի վաճառքով, <Արդշինինվեստբանկ> ՓԲ ընկերության <Վարդենիս> մասնաճյուղի նախկին կառավարիչ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի և վարկային բաժնի նախկին մասնագետ Հովհաննես Գագիկի Համբարձումյանի հետ, նախապես պայմանավորվածություն է ձեռք բերել կեղծ վարկերի ձևակերպմամբ, հատկացված առանձնապես խոշոր չափերի գումարները յուրացման եղանակով հափշտակելու և հանցավոր ձանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու հարցում: Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006թ. դեկտեմբերի 27-ից մինչև 2007թ. նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում, առանց մասնաճյուղի վարկառուների գիտության, անձամբ օգտագործելու նպատակով, կեղծել են իրավունք վերապահող պաշտոնական վարկային փաստաթղթեր, դրանց հիման վրա ձևակերպել են 15.366.600 ՀՀ դրամ և 2.336 ԱՄՆ դոլար գումարի կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկեր հատկացնելու թվով 59 կեղծ պայմանագրեր, ապա, հանցավոր ձանապարհով ստացված այդ գումարների իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, գումարները պարբերաբար, մաս-մաս, փոխանցել են <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հաշվեհամարին կենցաղային տեխնիկա իբր գնելու պատակով, որից հետո, <Խաչատուր Շաբոյան> Ա/Չ հաշվեհամարից գումարները (կանխիկ ստացել և առձեռն փոխանցել է Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին):

Ամբաստանյալներ Ա.Բաղդասարյանի և Խ.Շաբոյանի կատարած արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներին, նրանց կատարած արարքներին նախաքննական մարմնի և ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, այդ հանցանքները հիմնավորված են քրեական գործով ձեռք բերված փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար համակցությամբ, ամբաստանյալների կատարած արարքները վերաորակելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու հիմքեր չկան:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ներկայացված բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը,

ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը, հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռք բերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի և Խ.Շաբոյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, նրանց մեղսագրված արարքների քրեաիրավական գնահատականները ճիշտ են տրվել, առաջադրված մեղադրանքները վերաորակելու հիմքերը բացակայում են, իսկ դատավճիռն այդ մասով օրինական և հիմնավորված է:

Ինչ վերաբերում է պաշտպան Լ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի փաստարկներին այն մասին, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի նկատմամբ պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքն այս մասով ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 6-8-րդ կետերի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

- 6) ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար,
- 7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ,
- 8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական զուամրտակում պահելու ձևով պատիժ նշանակելիս հանգում է այն եզրակացության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի են առնվում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

Անձի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցը Վճռաբեկ դատարանն արծարծել է ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-124/07, ԱՎԴ2/0059/01/08, ԵԱԲԴ/0078/01/09 և այլ որոշումներում, որոնցում հայտնել և վերահաստատել է իրավական դիրքորոշում այն մասին, որ, չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես

հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, այնուհանդերձ դատարանը պարտավոր է ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ծավալը,

հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը (տես Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի ԵԱԲԴ/0078/01/09 որոշումը):

Հաշվի առնելով վերը շարադրվածը, նկատի առնելով ամբաստանյալ Ա.Բաղդասարյանին մեղսագրված հանցանքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի ուժով՝ համարվում են համապատասխանաբար՝ ծանր և առանձնապես ծանր, նաև հաշվի առնելով արարքի կատարման եղանակը, գործի կոնկրետ հանգամանքները, հանցագործությամբ պատճառված վնասի չափը, դրա լրիվ վերականգնված չլինելը, Արմեն Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, վերաքննիչ բողոքում նշված փաստարկները՝ իրենց համակցությամբ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն հանգելու այն հետևության, որ Արմեն Բաղդասարյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, Արմեն Բաղդասարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի բխում օրենքի պահանջներից, հետևաբար, նա պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը: Քննության առնելով ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաքննիչ բողոքի պահանջը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ևս պետք է մերժել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ: Բացառիկ կարող են ձանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար պարտադիր է հետևյալ երկու պայմաններով գոնե մեկի առկայությունը.

1. Հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը էականորեն նվազեցնող, հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայություն.

2. Խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը: Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համատեքստում քննության առնելով սույն քրեական գործի հանգամանքները, գտնում է, որ սույն քրեական գործով առկա են ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի անձը դրական բնութագրող, քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ, չկան քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ,

	<p>սակայն վերը նշված հանգամանքները բացառիկ չեն ինչպես առանձին-առանձին, այնպես էլ՝ իրենց համակցության մեջ, ուստի և՛ չեն կարող հիմք հանդիսանալ ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Ինչ վերաբերում է ամբաստանյալ Խ.Շաբոյանի շահերի պաշտպան Ս.Կարապետյանի միջնորդությանը Շաբոյանի նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն պետք է մերժել՝ նկատի ունենալով, որ միջնորդությանը կից ներկայացված ոստիկանության Քեղարքունիքի մարզային վարչության Քավառի բաժնի պետի 11.05.2011թ. N94/1133 գրությունն ուղղված պաշտպանին հիմք չի կարող հանդիսանալ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու համար:</p> <p>Այսպիսով, քննության առնելով վերը նշված բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. փետրվարի 04-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Խաչատուր Ռուբենի Շաբոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, օրինական, հիմնավորված, պատճառաբանված է, և այդ պայմաններում պաշտպանների, ինչպես նաև ամբաստանյալ Խ.Շաբոյանի վերաքննիչ բողոքների փաստարկները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ այն բեկանելու և փոփոխելու համար:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-1-րդ, 385-386-րդ, 390-391-րդ, 393-394-րդ, 402-րդ, 412-րդ, 418-րդ հոդվածներով, Վերաքննիչ դատարանը</p> <p>Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Պաշտպաններ Լևոն Պողոսյանի, Ստեփան Կարապետյանի, ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի վերաքննիչ բողոքները մերժել:</p> <p>ՀՀ Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. փետրվարի 04-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի ԱՐՄԵՆ ՌՈՐԵՐՏԻ ԲԱԴԱՍԱՐՅԱՆԻ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՐԵՆԻ ՇԱԲՈՅԱՆԻ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, թողնել օրինական ուժի մեջ:</p> <p>Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան հրապարակման պահից՝ մեկամսյա ժամկետում:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ</p> <p>ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</p> <p>Ս.ԶԻԶՈՅԱՆ</p>
Դատական ակտի ամսաթիվը:	27-05-2011
Ամսաթիվ:	27-07-2011
Էջերի քանակը:	7 հատոր. հատոր 1-ին՝ <249> թերթ, հատոր 2-րդ՝ <251> թերթ, հատոր 3-րդ՝ <310> թերթ, հատոր 4-րդ՝ <490> թերթ, հատոր 5-րդ՝

	<123> թերթ, հատոր 6-րդ՝ <178> թերթ, հատոր 7-րդ՝ <324> թեր
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	27-07-2011
Էջերի քանակը:	249, 251, 310, 490, 12, 178, 324թերթից:
Գործին կից նյութերը:	
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-11021/11
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	02-08-2011
Ղատական Գործ N: ԳԴ/0023/01/10	
Ամսաթիվ:	28-07-2011
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալ
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալ
Բողոք բերող անձինք	
Անուն	Ստեփան
Ազգանուն	Կարապետյան
Հասցե	Գեղարքունիքի մարզ, գ.Ծովինար
Այլ	Խաչատուր Շաբոյանի պաշտպան
Բողոք բերող անձինք	
Անուն	Խաչատուր
Ազգանուն	Շաբոյան
Հայրանուն	Ռուբենի
Հասցե	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս Երիտասարդության փող., 10-րդ շ., 3-րդ բն.
Բողոք բերող անձինք	
Անուն	Արմեն
Ազգանուն	Բաղդասարյան
Հայրանուն	Ռոբերտի
Հասցե	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս Հ.Արզոյան փող. 14 շ., բն. 25
Հավատարմագրված փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Ղատապարտյալ	
Անուն	

Ազգանուն	
Հասցե	
Չափաիս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	
Գործի առաքման ամսաթիվը:	27-07-2011
Գրության համարը:	ԴԴ-8-Ե-11021
Գործի ստացման ամսաթիվը:	02-08-2011
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	7 հատոր,
Դատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԳԴ/0023/01/10
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	2
Ամսաթիվ:	02-08-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Հովհաննես Հաբեթյանի Ղուկասյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Սամվել Վլադիմիրի Օհանյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	24-08-2011
Որոշման բովանդակությունը:	ԳԴ/0023/01/10 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՋՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 24 օգոստոսի 2011 թվական ք.Երևան ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՂԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

քննարկելով Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի և Խաչատուր Ռուբենի Շաբոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի պաշտպան Ս.Կարապետյանի, ամբաստանյալներ Խաչատուր Շաբոյանի և Արմեն Բաղդասարյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ի դատավճռով Արմեն Բաղդասարյանը և Խաչատուր Շաբոյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Արմեն Բաղդասարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 8.950.579 ՀՀ դրամի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ Արմեն Բաղդասարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 8.950.579 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Խաչատուր Շաբոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 6 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 ՀՀ դրամի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ Խաչատուր Շաբոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 7 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի պաշտպան Լ.Պողոսյանը, ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանը և նրա պաշտպան Ս.Կարապետյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալներ Խաչատուր Շաբոյանը, Արմեն Բաղդասարյանը և ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի պաշտպան Ս.Կարապետյանը:

Գտնելով, որ թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, արարքի սխալ որակման արդյունքում Խաչատուր Շաբոյանի նկատմամբ նշանակվել է խիստ պատիժ՝ պաշտպան Ս.Կարապետյանը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 27-ի որոշումը բեկանել, Խաչատուր Շաբոյանի արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և այդ հոդվածի սանցիայով նշանակել մեղմ պատիժ:

Պաշտպան Ս.Կարապետյանը նշել է, որ իր բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքը:

Վերլուծելով պաշտպան Ս.Կարապետյանի բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի հիմնավորումները բավարար չեն եզրահանգելու, որ առկա է գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանի բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքի առկայությունը հիմնավորված չէ:

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանը, գտնելով, որ իր արարքը սխալ է որակվել, Վճռաբեկ դատարանին խնդրել է արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածով և, հաշվի առնելով մեղմացնող հանգամանքները, նշանակել համապատասխան պատիժ:

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը, գտնելով, որ թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, իր արարքին ճիշտ որակում չի տրվել, նշանակվել է խիստ պատիժ, Վճռաբեկ դատարանին խնդրել է բեկանել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերը, արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և, հաշվի առնելով պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, նվազեցնել նշանակված պատիժը՝ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանին որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորումները:

Ամբաստանյալներ Խաչատուր Շաբոյանի և Արմեն Բաղդասարյանի վճռաբեկ բողոքների ուսումնասիրությունից երևում է, որ դրանք չեն բովանդակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքները ենթակա են վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի և Խաչատուր Ռուբենի Շաբոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի պաշտպան Ս.Կարապետյանի, ամբաստանյալներ Խաչատուր

	<p>Շաբոյանի և Արմեն Բաղդասարյանի վճռաբեկ բողոքները վերադարձնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ</p>
<p>Ամսաթիվ: Այլ նշումներ:</p>	<p>25-08-2011</p>
<p>Գործի առաքման ամսաթիվ: Դատարան: Այլ նշումներ:</p>	<p>30-08-2011</p> <p>Գեղարքունիքի Մարզ</p> <p>8 հատոր՝ 249, 251, 310, 490, 123, 178, 324, 151/կազմված ՀՀ վճռաբեկ դատարանում/ թերթ, 3 ծրար:</p>